ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/51

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի 21.12.2017թ. ներկայացված բողոքը և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 09.01.2018թ. ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/51 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն 21.12.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն ուսումնասիրելով «ԵՊՀ հիմնադրամ»-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթի թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, գտնում է, որ այն կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի 29.11.2017թ-ի թիվ 1 որոշմամբ հաստատված «ԵՊՀ

հիմնադրամ»-ի հրավերի մի շարք դրույթների խախտմամբ, որն էլ հանգեցրել է Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

«ԵՊՀ հիմնադրամ»-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարվել է հրատապ բաց մրցույթ թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

«ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն և «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

	Մասնակիցների տվյալները			Նախահաշ-վային գինը << դրամ, ներառյալ ԱԱՀ-ն
	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՍ» ԱՓԲԸ ք.Երևան, Արամի փող., 3 շենք +374-10-580000	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ ք. Երևան, Հյուսիսային պող., 1 շենք, 374-10-591010	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ ք.Երևան,Վազգեն Սարգսյան փող., 10 շենք, տարածք 110 374-60-500060	
	Գնային առաջարկը (<< դրամ, առանց ԱԱՀ-ի)			
	108,000,000	140,700,000	157,200,000	200,000,000

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ թիվ 3 արձանագրության 1.4. կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից

ներկայացված հայտը՝ վերջինիս կողմից ներկայացված լիցենզիայի գոյություն չունենալու հիմքով, նույն արձանագրության 1.5. կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը որոշել է, որ երկրորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությանը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն պետք է ներկայացնի որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող Հրավերով սահմանված փաստաթղթերը մինչև սույն թվականի դեկտեմբերի 22-ը, ժամը 10:00-ն, որն ըստ էության չի բխում Օրենքի պահանջներից, դրանով խախտվել են Օրենքի մի շարք դրույթների պահանջներ:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացվածհայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով՝ կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի գնային առաջարկը կազմում է 140,700,000.00 ՀՀ դրամ, վերջինս հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 13.12.2017թ. տրված թիվ O.AB.100.11CB.ESC.2.5363.17 Բանկային երաշխիքը, որի գումարը կազմում է 7,350,000.00 /յոթ միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Այսպիսով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացրած ընդհանուր գինը կազմել է 140,700,000 ՀՀ դրամ, որի 5 տոկոսը պետք է լինի 7,035,000 ՀՀ դրամ (140,700,000 *5%=7,035,000): Այնինչ, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն ներկայացրել է 7,350,000.00 /յոթ միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ գումարի չափով հայտի ապահովման բանկային երաշխիք, ինչի չափը ոչ թե հավասար է, այլ գերազանցում է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Այդուհանդերձ, Գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. թիվ 2 Արձանագրությամբ Մասնակիցների հայտերը, այդ թվում՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը, գնահատվել են Հրավերի պահանջներին բավարարող:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով և

«ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանված պահանջները:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումներիբողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ընկերությունը ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել ԵՊՀ հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.2 կետով

կայացված՝ մասնակիցների ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

2.Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել ԵՊՀ հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. ժամը 13:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.5 կետով կայացված՝ երկրորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությանը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերը մինչև սույն թվականի դեկտեմբերի 22-ը ժ. 10:00-ն ներկայացնելու վերաբերյալ որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները:

3. ԵՊՀ հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ որպես իրավական հետևանք, արգելել գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին ճանաչել հաղթող և արգելել վերջինիս հետ կնքել պայմանագիր:

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ԳԲԽ-ԱՄ-2017/51 բողոքի շրջանակներում 09.01.2018թ. ներկայացրած համանման բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն գտնում է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից՝ ներկայացված համանման բողոքն անհիմն է, ենթակա է մերժման հետևյալ հիմնավորումներով՝

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետի համաձայն՝ Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքի համաձայն՝ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ներկայացվել է վերը նշված Ընթացակարգի 7.4-րդ կետի խախտմամբ, այն է՝ հայտը ներկայացվել է 14.12.2017թ.-ին, իսկ նույն օրը կնքված բանկային երաշխիքի գործողության ժամկետ է սահմանվել մինչև 10.05.2018թ.-ը, այսինքն՝ երաշխիքը ներկայացվել է սահմանված 90 աշխատանքային օրվա ժամկետի գերազանցմամբ:

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի համաձայն՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից նախկինում ներկայացված բողոքում առկա էր համանման խախտում, որի համաձայն Կազմակերպության կողմից ներկայացված բանկային երաշխիքը ներկայացվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ և պետք է հավասար լիներ հայտով ներկայացվող գնի 5 տոկոսին, սակայն գերազանցում էր այն, և դա Ընկերության համար համապատասխան բողոք ներկայացնելու հիմք էր հանդիսացել:

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքի դեմ հայտնել է հետևյալ առարկությունները.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացվածհայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Չնայած այն փաստին, որ նշված դրույթի խախտմանն արդեն իսկ անդրադարձել ենք Ընկերության կողմից ներկայացված Բողոքում, սակայն հարկ ենք համարում այս անգամ ընդգծել նշված դրույթի իմպերատիվ բնույթը և համեմատական եզրեր անցկացնել Համանման բողոքի համար հիմք հանդիսացող 90 աշխատանքային օրվա ենթադրյալ խախտման հետ:

Այսպես՝ Օրենքի 32-րդ հոդվածով հստակ սահմանվում է, որ հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքը, չպետք է գերազանցի հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսը, իսկ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանված պահանջների համաձայն՝ բանկային երաշխիքը պետք է հավասար լինի հինմգ տոկոսին:

Մինչդեռ, հարկ ենք համարում ընդգծել, որ Օրենքը չի սահմանում, որ բանկային երաշխիքը պետք է տրված լինի ոչ ավել, քանի 90 աշխատանքային օր ժամկետով, իսկ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով սահմանվում է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր: Վերը նշված ձևակերպման մեջ ի տարբերություն հրավերի 7.1-րդ կետի՝ առկա չէ հստակ իմպերատիվ պահանջ, որը

կսահմանափակեր 90 աշխատանքային օրը գերազանցող վավերականության ժամկետ ունեցող հայտի ապահովում ներկայացնելու հնարավորությունը:

Միաժամանակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Վերոգրյալ իրավական նորմի վերլուծությունից ուղղակիորեն հետևում է այն, որ բոլոր դեպքերում, երբ իրավական նորմի մեկնաբանությունից բխեր, որ հայտի ապահովման վավերականությունը չպետք է գերազանցի 90 աշխատանքային օրվա ժամկետը՝ այդ մասին պետք է ուղղակիորեն և տառացի նշված լիներ վեճի առարկա իրավական նորմում, ինչը սակայն բացակայում է: Իսկ փաստացի առկա «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով սահմանվում է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր, և ոչ օրինակ՝ «հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված ոչ ավել, քան 90 աշխատանքային օր», կամ՝ «հայտի ապահովման վավերականությունը պետք է հավասար լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրվան», կամ՝ «հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված մինչև 90 աշխատանքային օր»

Ամփոփելով վերոգրյալը, «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն խնդրել է «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ԳԲԽ-ԱՄ-2017/51 բողոքի շրջանակներում 09.01.2018թ. ներկայացված համանման բողոքը մերժել, քանի որ այն անհիմն է:

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.12.2017թ. ժամը 11:00-ի և 12.01.2018թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 21.12.2017թ. բողոքով և 11.01.2018թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումները:

2. «Ռոսսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ռոսսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն 09.01.2018թ. համանման բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որով հայտնել է, որ հաշվի առնելով «Նաիրի

Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 21.12.2017թ. ներկայացված բողոքը, որի արդյունքում կարող են խախտվել «Ռոսսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի շահերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ կետի դրույթներով «Ռոսսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն ներկայացնում է ներքոհիշյալ համանման բողոքը հետևյալի մասին.

Ելնելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 21.12.2017թ. ներկայացված բողոքի էությունից և ուսումնասիրելով «ԵՊՀ հիմնադրամ»-ի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթի թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. նիստի թիվ 2 արձանագրությունը, ինչպես նաև նշված ընթացակարգով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը «Ռոսսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն գտնում է, որ այն կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի, «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 29.11.2017թ. թիվ 1 որոշմամբ հաստատված հրավերի դրույթների խախտմամբ, մասնավորապես.

«ԵՊՀ հիմնադրամ»-ի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ռոսսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն և «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն հայտը, բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է 14.12.2017թ.-ին: Նույն օրը «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից կնքվել է թիվ 4097-17 բանկային երաշխիքը, որի 5-րդ կետով նշվել է, որ երաշխիքը գործում է մինչև 10.05.2018թ., որի արդյունքում խախտվել են Օրենքի, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով նախատեսված պայմանները, այն է՝ բանկային երաշխիքի գործողության ժամկետը գերազանցել է հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրյա ժամկետը:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը՝

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքը կնքվել է հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրյա ժամկետի գերազանցմամբ, այնինչ այն պետք է կնքվեր հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրյա ժամկետով, այնպես ինչպես ըստ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 21.12.2017թ. ներկայացված բողոքով խախտվել է Հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանված պահանջը, համաձայն որի բանկային երաշխիքը պետք է հավասար լիներ հայտով ներկայացվող գնի 5 տոկոսին, սակայն «Ռոսսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի բանկային երաշխիքը գերազանցել էր հայտով ներկայացվող գնի 5 տոկոսին, որը և հիմք էր հանդիսացել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից բողոք ներկայացնելուն:

Սակայն գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. թիվ 2 արձանագրությամբ մասնակիցների հայտերը, այդ թվում՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, գնահատվել է Հրավերի պահանջներին բավարարող:

Ամփոփելով, Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, Կարգի 41-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով սահմանված պահանջները:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները:

Ընկերությունը ներկայացված համանման բողոքով Խորհրդին խնդրել է պարտավորեցնել ԵՊՀ հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին որոշում ընդունել և թույլ տալ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին շտկելու և գնահատող հանձնաժողովին ներկայացնելու բանկային երաշխիքը, որը հավասար կլինի հայտով ներկայացվող գնի 5 տոկոսին, իսկ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին՝ շտկելու և գնահատող հանձնաժողովին ներկայացնելու բանկային երաշխիքը, որի գործողության ժամկետը կսահմանվի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 09.01.2018թ. համանման բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. **«ԵՊՀ հիմնադրամ»-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները**

«ԵՊՀ հիմնադրամ»-ը 29.12.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ «ԵՊՀ հիմնադրամ»-ը «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման ընթացքում առաջացած բողոքի՝ հայտի ապահովման հաշվարկի վերաբերյալ «ԵՊՀ հիմնադրամ»-ը պաշտոնական գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը նույն հարցադրմամբ, արդյո՞ մասնակիցը սահմանված 5 տոկոսի փոխարեն կարող է ավել գումար ներկայացնել, թե՞ ոչ, որին ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Իսկ նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Ամփոփելով, «ԵՊՀ հիմնադրամ»-ը խնդրել է Խորհրդին հաշվի առնել վերը նշված հանգամանքը բողոքի քննության արդյունքում որոշում կայացնելիս:

«ԵՊՀ հիմնադրամ»-ը 09.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԵՊՀ հիմնադրամ»-ի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարվել է հրատապ բաց մրցույթ թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով:

«ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն եւ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

Ըստ «Նաիրի Ինշուրանս» ԱՓԲԸ-ի 21.12.2017թ. բողոքի «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ն խախտել է «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1. ենթակետի պահանջները, քանի որ հայտով պետք է ներկայացներ Հրավերով սահմանված հայտի ապահովում, որի չափը պետք է հավասար լիներ հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին, սակայն «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն ներկայացրել է հայտի ապահովում, որի չափը գերազանցում է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսը:

Նշված փաստը «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից դիտվել է, որպես խախտում եւ վերջինս բողոք է ներկայացրել ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդ եւ խնդրել է՝

1. դադարեցնել եւ/կամ չեղյալ հայտարարել «ԵՊՀ հիմնադրամ»-ի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ««ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.2. կետով կայացված՝ Մասնակիցների ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի Հրավերի պահանաջներին չհամապատասխանելու հիմքով,

2. դադարեցնել եւ/կամ չեղյալ հայտարարաել «ԵՊՀ հիմնադրամ»-ի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. ժամը 13:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.5 կետով կայացված՝ երկրորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությանը «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերը մինչեւ սույն թվականի դեկտեմբերի 22-ը, ժամը 10:00-ն ներկայացնելու վերաբերյալ որոշումը եւ այդ որոշումից բխող այլ որոշումները,

3. «ԵՊՀ հիմնադրամ»-ի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող՝ հանձնաժողովի որպես իրավական հետեւանք արգելել գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին ճանաչել հաղթող եւ արգելել վերջինիս հետ կնքել պայմանագիր:

«ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն նույնպես 14.12.2017թ.-ին հայտ է ներկայացրել: Ի թիվս այլ փաստաթղթերի, հայտի շրջանակներում «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն ներկայացրել է 14.12.2017թ. կնքված թիվ 4097-17 բանկային երաշխիքը, որի 5-րդ կետում նշվել է, որ երաշխիքը գործում է մինչեւ 10.05.2018թ.: Նշված ժամկետը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4. ենթակետին, համաձայն որի հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված երաշխիքի

ժամկետը գերազանցում է հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրյա ժամկետը, որի հետեւանքով վերջինս խախտել է Օրենքի, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4. ենթակետով նախատեսված պայմանները: Ըստ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4. ենթակետի համաձայն՝ Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Սակայն «ԵՊՀ հիմնդրամ»-ը որպես խախտում չի դիտարկել ինչպես «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից հայտի ապահովումը 5 տոկոսից ավելի կատարելու փաստը, այնպես էլ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրյա ժամկետը գերազանացելու փաստը:

Ամփոփելով վերագրյալը, «ԵՊՀ հիմնդրամ»-ը հայտնել է, որ հաղթող ճանաչելու որոշման հարցը անհարժեշտ է թողնել գնահատող հանձնաժողովի դիտարկմանը:

«Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 08.01.2018թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

«ԵՊՀ հիմնդրամ»-ը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.12.2017թ. ժամը 11:00-ի և 12.01.2018թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, 27.12.2017թ. ժամը 11:00-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 29.12.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

4. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ԵՊՀ հիմնադրամ»-ի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն եւ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

2. «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 140 700 000 << դրամ:

3. «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 13.12.2017թ. տրված թիվ O.AB.100.11CB.ESC.2.5363.17 բանկային երաշխիքը, որի գումարը կազմել է 7 350 000 << դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ մասնակիցների ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ վերջինիս կողմից ներկայացված լիցենզիայի գոյություն չունենալու հիմքով:

6. Նույն արձանագրության 1.5. կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է առաջարկել երկրորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությանը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, ներկայացնելու որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերը՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 22-ը, ժամը 10:00-ն:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

<< գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի 21.12.2017թ. բողոքը, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի 09.01.2018թ. համանման բողոքը, «ԵՊՀ հիմնադրամ»-ի 29.12.2017թ. և 09.01.2018թ. գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» << օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:*** Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

<< կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այն դեպքում, ***երբ տվյալ ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով***:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ԵՊՀ հիմնադրամ»-ի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն եւ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:*** Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 140 700 000 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 13.12.2017թ. տրված թիվ O.AB.100.11CB.ESC.2.5363.17 բանկային երաշխիքը, որի գումարը կազմել է 7 350 000 ՀՀ դրամ:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի <u>մինչև հինգ տոկոսին</u>:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը <u>հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:</u>***

Այսպիսով, վերոգրյալ իրավական հիմնավորումներից ելնելով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի

հինգ տոկոսը, քանի որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***7 035 000 << դրամ***, այլ ոչ ***7 350 000***, ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջին:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հայտը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ ենթակա էր մերժման հայտերի բացման նիստում:

Ինչ վերաբերում է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված երրորդ պահանջին, այն է՝ ԵՊՀ հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ որպես իրավական հետևանք, արգելել գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին ճանաչել հաղթող և արգելել վերջինիս հետ կնքել պայմանագիր, ապա այս մասով Խորհուրդն արձանագրում է, որ Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ և հաշվի առնելով այն փաստը, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հիմնա վրա «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգը կասեցվել է որակավորման փաստաթղթերի ներկայացման փուլում և միաժամանակ քանի, որ բողոքով ներկայացված երկրորդ պահանջը ուստի Խորհուրդը գտնում է, որ սույն մասով բողոքաբերի պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից համանման բողոքով ներկայացված պահանջին, այն է՝ պարտավորեցնել ԵՊՀ հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին որոշում ընդունել և թույլ տալ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին շտկելու և գնահատող հանձնաժողովին ներկայացնելու բանկային երաշխիքը, որը հավասար կլինի հայտով ներկայացվող գնի 5 տոկոսին, իսկ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին՝ շտկելու և գնահատող հանձնաժողովին ներկայացնելու բանկային երաշխիքը, որի գործողության ժամկետը կսահմանվի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր, ապա այս մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը՝

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերը նշված իրավական հիմնավորումներից ելնելով, Խորհուրդը գտնում է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից համանման բողոքով ներկայացված պահանջն իրավաչափ չէ և ենթակա է մերժման, քանի որ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը ենթակա չէ շտկման, ավելին՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ այն ենթակա է մերժման հայտերի բացման նիստում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 21.12.2017թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

• ԵՊՀ հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.2 կետով կայացված որոշումը դադարեցնելու և/կամ չեղյալ հայտարարելու մասով պահանջը մերժել:

• ԵՊՀ հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. ժամը 13:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.5 կետով կայացված՝ երկրորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությանը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերը մինչև սույն թվականի դեկտեմբերի 22-ը ժ. 10:00-ն ներկայացնելու վերաբերյալ որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները դադարեցնելու վերաբերյալ պահանջը բավարարել:

2. «Ռոսսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 09.01.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ